ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Հոդված 1. <<Ազգային անվտանգության մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից <<Հայաստանի Հանրապետության Նախագահը,>> բառերը հանել,

2) 2-րդ մասում <<Նախագահը>> բառը փոխարինել <<վարչապետը>> բառով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) <<ա>> կետում <<Հայաստանի Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության կառավարություն ու նրանց>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին, ինչպես նաև վերջինիս>> բառերով,

2) <<ժէ>> կետում <<Նախագահին>> բառը փոխարինել <<նախագահին, վարչապետին>> բառերով:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում <<Հայաստանի Հանրապետության Նախագահը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու վարչապետը>> բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: